ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 65/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 06.06.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-65/16 բողոք), Ոսկեհասկի գյուղապետարանի 16.06.2016թ. թիվ 71 գրությունը և կից փաստաթղթերը և ԳԲԽ-65/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպվել է «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ 01/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում) մասնակցել են վերոհիշյալ Ընթացակարգին:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Բարվա ՍՊԸ-ն, որը պայմանագրի կատարման համար առաջարկել է 7 600 000 ՀՀ դրամ, իսկ Ընկերությունը առաջարկել է՝ 4 999 992 ՀՀ դրամ:

Ընկերությունը բողոքով տեղեկացրել է նաև, որ 26.05.2016թ. կայացված «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ 01/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում): Նույն արձանագրության համաձայն՝ առաջարկվել է Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որը և Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է:

Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ 01.06.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված որակավորումը հիմանվորող փաստաթղթերում առկա են թերություններ և անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1. Ընկերության կողմից ներկայացված հակակարկտային կայանի տեխնիկական պայմանը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

2. Ընկերության հայտը չի համապատասխանում «Մասնագիտական փորձառություն» չափանիշին:

«Լոկատոր» ՓԲԸ-ն տեղեկացրել է նաև, որ 01.06.2016թ. գրավոր պարզաբանում-հիմնավորում է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական պայմանի 25.05.2016թ. թիվ 12514/3 փոփոխությունը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին, ինչպես նաև հիմնավորմանը կից Ընկերությունը գնահատող հանձնաժողովին է ներկայացրել ապացույց առ այն, որ Ընկերությունը տեղադրել է կոնկրետ հրավերով պահանջվող հակակարկտային կայան:

Այնուհետև՝ 03.06.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ պատճառաբանմամբ, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից համատեղ կարգով (կոնսորցիում) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես.

1. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում պահպանվող տարածքը նշված է 80-120 հա, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է 100 հա,

2. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրով մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը նշված է 5-15գ, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է առավելագույնը 5գ,

3. Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է գլանանոթների տարողությունը,

4. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում կայանի կրակոցների թիվը նշված է 8000-24000 հատ, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված էոչ պակաս 20000 հատ,

5. Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ և 3-րդ կետերում նշված կայանի տեղակայման աշխատանքների կատարման նկարագիրը և հիմքի տեխնիկական բնութագիրը:

Պատվիրատուի վերոնշյալ դիտարկումների հետ կապված Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

1. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում պահպանվող տարածքը նշված է 80-120, որը նշանակում է, որ Ընկերության կայանները կարող են ապահովել մինչև 120 հա պաշտպանվող ծածկույթ, կախված պատվիրատուի պահանջներից կայանը տեղադրվում է այնպես, որպեսզի ապահովվի կոնկրետ 100 հա պաշտպանվող ծածկույթ,

2. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրով մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը նշված է 5-15գ, որը նշանակում է, որ Ընկերությունը կարող է մեկ մկրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի ծախսը ստանալ, օրինակ՝ առավելագույնը 5գ, առավելագույնը 7գ կամ առավելագույնը 15գ՝ ըստ պատվիրատուի պահանջի,

3. Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես՝ անձնագրում նշված պարամետրերի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Ընկերության կողմից առաջարկվում է 20 կգ տարողությամբ գլանանոթներ, քանի որ գազի նվազագույն ծախսը (5գ) երբ բազմապատկվում է կրակոցների առավելագույն

քանակով (24 000) ստացվում է վառելանյութի ընդհանուր քաշը՝ 120 000գ, այսինքն 120կգ, ինչը և պահանջվում էր հրավերով, օրինակ՝

5գ x 24 000 կրակոց = 120 000գ = 120 կգ

120 կգ/6 գլանանոթ = 20կգ՝ ինչը և պահանջվում էր հրավերով,

4. Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում կայանի կրակոցների թիվը նշված է 8000-24000 հատ, որը նշանակում է, որ ծրագրային ապահովման միջոցով Ընկերությունը կարող է ապահովել կոնկրետ կայանի կրակոցների թիվ մինչև 24 000 հատ՝ ըստ պատվիրատուի պահանջի,

5. Ընկերության կողմից ներկայացվել է թե ինչ հակակարկտային կայան է տեղադրվել և ինչ եղանակով, մեթոդով կամ ձևով: Հրավերով տեղակայման աշխատանքների կատարման նկարագիրը և հիմքի տեխնիկական բնութագիր չի պահանջվել ընդհանրապես:

Ընկերությունը, բողոքում մեջբերել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, օրենքի6-րդ հոդվածի 1-ինև օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջները,բողոքարկմանխորհրդինխնդրել է.

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել կողմերի միջև պայմանագրի կնքման մասին որոշումը,

2. չեղյալ հայտարարել 03.06.2016թ. կայացված ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16 ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

3. պայմանագիր կնքված լինելու դեպքում հայտարարել թիվ ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16 ծածկագրով Ընթացակարգն ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 10.06.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-65/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչները բողոքը պնդեցին ամբողջությամբ:

2. Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ոսկեհասկի գյուղապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Լոկատոր» ՓԲԸ-ի 06.06.2016թ. բողոքի վերաբերյալ 16.06.2016թ. թիվ 71 գրությամբ Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով բյուջետային միջոցների սղությունը, և որ մեկ անգամ է գնումը կատարվում, երկար տարիների օգտագործման նպատակով, ցանկանում են գնել որակյալ, մարդկային կյանքի համար անվտանգ, հուսալի և ժամանակով փորձված հակակարակտային կայաններ: Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ այդ նպատակով Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից, Ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը կազմելիս, ուսումնասիրվել է Հայաստանի տարբեր մարզերի տարբեր համայնքներում տեղակայված և շահագործվող հակակարակտային կայանները, արդյունքում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բոլոր մարզերում տեղակայված են «Զենիթ» հակակարակտային կայաններ, որոնք հուսալի են և անվտանգ մարդկային կյանքի համար, ինչպես նաև բացառում են դաշտերում հրդեհների առաջացումը: Տվյալ կայանի շահագործման ընթացքում, կրակի ժամանակ բոցի արտահոսքը բացառվում է իր տեխնոլոգիական կառուցվածքի շնորհիվ: Կայանները կառավարվում են բջջային կապի միջոցով և կրակի հրաման արձակելիս երբեք չես իմանա թե արդյոք կայանի տարածքում, մոտակայքում մարդ կա, թե՝ ոչ:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ինչ վերաբերվում է սույն հրավերով պահանջվող սերտիֆիկատին, ապա տվյալ սերտիֆիկատները հավաստում են, որ կայանը աշխատանքի ժամանակ մարդկային կյանքի համար անվտանգ է, ինչը ամենակարևորն է, և կայանի տեխնոլոգիական կառուցվածքի հետ միասին հանդիսանում է գնման առարկայի հատկանիշների անբաժան մասը:

Ինչ վերաբերվում է կայանի հիմքի կառուցմանը, ապա Պատվիրատուն նշել է, որ տեղում (թաց եղանակով) հիմքի կառուցման համար պահանջվում է փորձաքննություն անցած նախագիծ և տեխնիկական հսկողություն, ինչը հավելյալ ծախս է և բացի դա, չոր եղանակով հիմքի տեղադրումը համարվում է ժամանակավոր կառույց և

անհրաժեշտության դեպքում ցանկացած ժամանակ կարելի է տեղափոխել, իսկ բետոնե սալի պարամետրերի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում տեղակայված հակակարկտային կայանների հիմքում դրված է այդպիսի ամբողջական գործարանային արտադրության սալ, որը անհրաժեշտ է կայանի հուսալի աշխատանքի համար:

Նմանատիպ համարվող աշխատանքների վերաբերյալ, Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ հրավերում նշվել է, որ անհրաժեշտ է գնման առարկայի առանձնահատկությանը համապատասխան, այսինքն՝ մարդկային կյանքի համար անվտանգ կայանների տեղակայումով մատակարարման աշխատանքների փորձ:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Ընկերությունը ներկայացված բողոքով նշում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից չի կատարվել հաշվարկներ և մեջբերում է իր կողմից իրականացված հաշվարկները, Պատվիրատուն նշել է, որ այդ հաշվարկները անհիմն են, քանի որ Ընկերությունը հաշվարկներ է իրականացնում իր համար ցանկալի թվաբանությամբ, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրով մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը նշված է 5-15գ, իսկ կրակոցների թիվը՝ 8 000-24 000, այնինչ հրավերով նախատեսված է առավելագույնը 5գ և ոչ պակաս 20 000 կրակոց: Ներկայացվածը համեմատելով և գնահատելով, պետք է տրամաբանորեն հաշվարկել հետևյալ կերպ՝ 5գ–ի դեպքում 8 000 կամ լավագույն դեպքում 10 000 կրակոց, սակայն ինչպես նշվեց հրավերով նախատեսվել է ոչ պակաս 20 000 կրակոց և վառելանյութի ծախսը ոչ ավել 5գ: Ստացվում է, որ չի կարող նման հաշվարկ կատարվել և5գ-ի պայմաններում արձակել պահանջվող չափի կրակոց, որտեղից էլ հետևում է, որ չի կարող նման վառելանյութի ծախսով կատարվի հրավերի պահանջները, այսինքն կա հստակ անհամապատասխանություն: Բացի դա ներկայացված փաստաթղթերում բացակայում է գլանանոթերի տարողությունը:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական պայմաններում, ինչպես նաև մնացած փաստաթղթերում նշված չէ պահանջվող բետոնե սալի (հիմքի) վերաբերյալ որևէ տեղեկություն, այլ ընդամենը նշված է, որ աշխատանքները կարող են կատարվել և չոր և թաց եղանակով: Ընկերությունը նաև չի ներկայացրել հրավերով սահմանված տեղակայման աշխատանքների վերաբերյալ

որևէ փաստաթուղթ, հետևաբար հայտը չի կարող բավարարվել ենթադրությունների հիման վրա, ուստի որակավորման փաստաթղթերի անհամապատասխանության պատճառով հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ իր կողմից որևիցե արհեստական արգելք չի ստեղծվել գնման գործընթացին որևէ հնարավոր մասնակցի մասնակցության համար, և ամենը օբյեկտիվորեն հիմնավորված է գնման առարկայի առանձնահատկություններից ելնելով, ուստի Պատվիրատուն գտնում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ոսկեհասկի գյուղապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ65/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-65/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 17.06.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Լոկատոր» ՓԲԸ-ի 06.06.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. <u>ԳԲԽ-65/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-65/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպ-վել է «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին ներկայացնում է.

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը և նույն հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտներին համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը....:

3. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝

ա) հակակարկտային կայան, պաշտպանող ծածկույթը 100 հա, մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը՝ ոչ ավել, քան 5գ, կրակոցների ընդհանուր քանակը ոչ պակաս 20000, լիցքավորման համար անհրաժեշտ գլանանոթների քանակը՝ 6 հատ, յուրաքանչյուրը 20 կգ տարողությամբ: Էլեկտրասնուցումը ավտոնոմ՝ արևային մարտկոցի միջոցով: Պայթուցիչ գազի ներհոսքը այրման խցիկ, ինչպես նաև այրման խցիկի օդափոխությունը պետք է իրականացվի հատուկ էլեկտրական օդամղիչի միջոցով, որի արդյունքում կրակոցի ժամանակ բացառվում է արտաքին բոցի առաջացում: Հեռակառավարումը բջջային հեռախոսացանցի և կենտրոնացված համակարգչային համակարգի միջոցով: Հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտին:

բ) տեղակայման աշխատանքները նախատեսում են կայանի տեղակայման տարածքի հողի հարթեցում և բացառապես չոր եղանակով հիմքի կառուցում: Հիմքը պետք է լինի մեկ ամբողջական առնվազն 18 սմ հաստությամբ երկաթբետոնե սալից, որը պետք է պատրաստված լինի 16մմ հաստությամբ ամրանից հյուսված 20սմ x 20սմ շախմատաձև 2 ցանցով, ցանցերի հեռավորությունը միմյանցից 10սմ, լցոնված B20 դասի ծանր բետոնով:

գ) երկաթբետոնե հիմքի վրա մոնտաժվում են կայանի բոլոր հանգույցները: Կայանը և դրա մուտքը պետք է պաշտպանված լինի կողմնակի անձանց ելումուտից:

4. Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպ-

ված «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում):

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Նույն արձանագրության համաձայն՝ առաջարկվել է Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որը և Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2016թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոկատոր» ՓԲԸ և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ից պահանջվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից համատեղ կարգով (կոնսորցիում) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝

□ Ընկերության կողմից ներկայացված ՏՊ AM 39225941.7599-2015 անձնագրում պահպանվող տարածքը նշված է ***80-120 հա,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***100 հա,***

□ Ընկերության կողմից ներկայացված ՏՊ AM 39225941.7599-2015 անձնագրով մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը նշված է ***5-15գ,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***առավելագույնը 5գ,***

□Ընկերության կողմից ներկայացված ***փաստաթղթերում բացակայում է գլանանոթների փարողությունը,***

□ Ընկերության կողմից ներկայացված ՏՊ AM 39225941.7599-2015 անձնագրում կայանի կրակոցների թիվը նշված է ***8000-24000 հատ,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***ոչ պակաս 20000 հատ,***

□ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում ***բացակայում է հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ և 3-րդ կետերում նշված կայանի տեղակայման աշխատանքների կատարման նկարագիրը և հիմքի տեխնիկական բնութագիրը:***

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 06.06.2016թ. ներկայացրած բողոքը, Ոսկեհասկի գյուղապետարանի 16.06.2016թ. թիվ 71 գրությունը և կից փաստաթղթերը, Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16»ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետնաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից համատեղ կարգով (կոնսորցիում) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝

- Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում պահպանվող տարածքը նշված է ***80-120 հա,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***100 հա,***
- Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրով մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը նշված է ***5-15գ,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***առավելագույնը 5գ,***
- Ընկերության կողմից ներկայացված ***փաստաթղթերում բացակայում է գլանանոթների փարողությունը,***
- Ընկերության կողմից ներկայացված ՏՊ ԱՄ 39225941.7599-2015 անձնագրում կայանի կրակոցների թիվը նշված է ***8000-24000 հատ,*** իսկ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է ***ոչ պակաս 20000 հատ,***
- Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում ***բացակայում է հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ և 3-րդ կետերում նշված կայանի տեղակայման աշխատանքների կատարման նկարագիրը և հիմքի տեխնիկական բնութագիրը:***

Այսպիսով, Ընթացակարգի հրավերով սահմանված և Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի արձանագրած անհամապատասխանությունները հիմնավոր են, ուստի, մերժելով Ընկերության հայտը, Պատվիրատուն գործել է իրավաչափ՝ առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լոկատոր» ՓԲԸ-ի՝ Ոսկեհասկի գյուղապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2016թ. թիվ 4 արձանագրությամբ՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու և պայմանագիր կնքած լինելու դեպքում «ՇՄՈԳՊԸԱՊՁԲ-01/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգն ապօրինի հայտարարելու պահանջի վերաբերյալ 06.06.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Հրաչյա Ավետիսյան**

Մանե Նազարյան